Համարի հանրաքվեն. համաձա՞յն եք, որ գաղտնի պահվեն աշխարհի մոլիբդենի պաշարների ութ տոկոսն արդյունահանող «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ բաժնետերերի անունները:
Համաձա՞յն եք, որ Քաջարանի կոմբինատի բաժնետերերի մեջ թուրքեր կամ ադրբեջանցիներ լինեն:
Համաձա՞յն եք, որ չբացահայտվեն, թե ովքեր եւ ինչ մեթոդով են 2014-18թթ. Սյունիքում իրականացրել սեփականության վերաբաշխում:

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ.ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ:

ISSN 1829-3468

Ու որպեսզի թամաշավոր - ժողովրդի սիրտը շահած լինեն ու բարեկամ պահած, միշտ գոռում են «ժողովրդի» անունը...

Հովհաննես Թումանյան

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 18 ՓԵՏՐՎԱՐԻ 2020Թ.
№ 3 (519)

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Մեղրեցի ճանապարհաշինարարները շուրջօրյա հերթապահություն են իրականացնում

Այս անգամ էլ Մեղրի մեկնելիս մեր ուշադրության կենտրոնում էր Մ-2 միջպետական ճանապարհի Քաջարան-Մեղրի ճանապարհահատվածը, որ սպասարկում է «Մեղրու ճանապարհների շինարարություն եւ շահագործում» ՍՊ ընկերությունը (տնօրեն՝ Ազատ Գասպարյան):

Ձյունասակավ այս ձմռան առաջին առատ տեղումը փետրվարի 8-ին եղավ, ընդ որում՝ հանրապետությունով մեկ, ինչը լուրջ քննություն էր ճանապարհաշինարարների համար: Քաջարանից Մեղրու լեռնանցք բարձրանալիս ճանապարհը ձյունապատ էր, բայց անցանելի: Մեղրեցի ճանապարհաշինարարներին հանդիպեցինք ծովի մակարդակից 2520 մետր բարձրության վրա տեղակայված ճանապարհային տնակում, ընդ որում՝ դեռեւս շատ հեռվից տեսանելի է տնակի մոտ խմբված ճանապարհի ձմեռային սպասարկման եւ պահպանության համար նախատեսված տեխնիկան:

Ինչպես տեղեկացանք, այդ պահին հերթապահում էին 9-11 ճանապարհաշինարարներ, մեխանիզատորներ, վարորդներ: Ընկերության աշխղեկ Գրիշա Թումանյանը թվարկում է ճանապարհների ձմեռային սպասարկման տեխնիկան՝ չորս մաքրող տեխնիկա՝ մղանով, երկուական «Կամազ» եւ «Գրեյդեր», մեկ փոքրածավալ էքսկավատոր, մեկ ռոտոր, որ ձյունը նետում է ճանապարհից եւ այլն: Ի դեպ, երբ Քաջարանից բարձրանում էինք լեռնանցք, ձյունապատ ճամփեզրին մի բեռնատար էր «լռվել»: Տղաները բացատրեցին, որ տվյալ մեքենան խափանվել է: Իրանցի վարորդին հրավիրել են ճանապարհային տնակ, տաքացրել, հյուրասիրել, մեքենայի խնդիրն արդեն ինքը պիտի լուծեր: Աշխղեկը նաեւ տեղեկացնում է, որ պատահում է՝ մեքենան խրվում է ճամփեզրի ձյան հաստ շերտի մեջ, օգնում են դուրս գալ այդ դժվարին վիճակից:

Ընկերության աշխղեկ Ռոման Սարգսյանը պատմում է վերջին ձյունառատ օրերի մասին. *«Մինչեւ հունվար եղանակը բարենպաստ է եղել, առանձնապես ձյուն չի եկել, եթե պատահել է տեղումներ են եղել, չենք թողել, որ ճանապարհին մերկասառույց լինի, ամենադժվարը, երկու օր առաջ էր, երբ բուք է եղել, բայց նման եղանակային անոմալիաներով մեղրեցի ճանապարհաշինարարներին անակնկալ չես բերի: Պատահում է՝ մի հատվածում օրական 4-5 անգամ աղ ու ավազ ենք ցանում»:*

Հընթացս տեղեկացանք, որ տեղումների

էջ 5

Սյունիքը եւ ռուսական ֆենոմենը

ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՑԻ

Զրտաբերելով ռուս բառը՝ սյունեցին իր խոհերի մեջ այն զուգորդում է ազգային համերաշխության, ուժի եւ մշակույթի հետ:

Դարերի հոլովույթում ռուս բառն ակնածանքի ներուժով անխամիր դրոշմվել է մեր անցյալ ու ներկա ժամանակների հարահոսի վրա: Մեր բարբառը հագեցած է ռուսերեն բազմաթիվ բառերով: Ներկա բոլոր սերունդների համար ռուսերենը մատչելի է, իսկ ուսյալները տիրապետում են գրավոր ռուսերենին: Տարեցներն իրենց պատմությունը երբեմն ժամանակագրում են ռուսական ցարերի անունով՝ Նիկալային դարվին, Ալեքսանդրի դարվին եւ այլն:

Պետրոս Մեծի ժամանակներից, մահմեդական բռնության ճիրանների մեջ գտնվելով, սյունեցիները բաղձանքով սպասել են ռուսներին: Դեռ Բակունցն է տարեգրել, որ արդարություն գտնելու համար մեր նախնիները նամակ են գրել ռուսաց թագավորին: Ցարին ենթարկվելուց հետո մեր ռազմատենչ երիտասարդությունը վերագտել է իրեն ռուսական բանակում, վիպելու արժանի սխրանքներ գործել, կայացել է ռուսական զենք գործածելիս եւ ազատագրել իր հայրենիքը:

Երբ ռուսները եկել են թուրքերի հետ, մեծ սյունեցին՝ Նժդեհը, զգուշացրեց քողարկված դավադրության մասին, որը համոզիչ իմաստավորվեց տասնամյակներ անց: Ահա, Սյունիքի երկու դարը նաեւ ռուսական է: Դավիթ-Բեկի իշխանությունից հետո շատ սյունեցիներ գաղթեցին Ռուսաստան, համալրեցին Ղզլարը, Մոզդոկը, Աստրախանը, անգամ Մոսկվան: Հետո, երբ Գրիբոյեդովն ու Պուշկինն անցան մեր կողմերով, ռուս մուժիկներ եկան ու գյուղեր հիմնեցին Սյունիքում:

Հիմա, երբ տեղ-տեղ սյունեցու հարսը կամ փեսան ռուս է, ընդունվում է սովորականի նման: Ազգագրորեն հետաքրքիր փաստ է, որ վաղ անցյալից սիրահարված հայ տղաներն իրենց մարմնի վրա դաջում են Կատյա, Վալյա, Նատաշա, Վերա, Լյուբա եւ նման գեղեցկահունչ անուններ: Թերեւս իզուր էր կատակում Պետրոս թագավորը, երբ ասում էր, թե օտարին հարս գնացած ռուս կնոջից ռուսներ են ծնվում: Գոնե Սյունիքի օրինակով դա թագավորավայել կռահում չէ. Սյունիքում հարս եկած ռուս կանայք երեւելի հայրենասեր հայ զավակներ են տվել...

Ե՞րբ են հայերն առաջին անգամ տեսել ռուսներին կամ հաղորդակցվել նրանց հետ, ինչպե՞ս են նախապես կոչել նրանց:

էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Սահմանադրության 206-րդ հոդվածով, ինչպես նաև «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Ազգային ժողովի 2020 թվականի փետրվարի 6-ի «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին» ԱԺՈ-001-Ն որոշումը.

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն նշանակել 2020 թվականի ապրիլի 5-ին:
2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

2020թ. փետրվարի 9, Երեւան
ՆՀ-32-Ն

Ընտրություններին մասնակցելու հայտ է ներկայացրել 12 թեկնածու

Արցախի Հանրապետությունում մարտի 31-ին կայանալիք նախագահական ընտրություններին մասնակցելու հայտ է ներկայացրել 12 թեկնածու: Աժ ընտրություններին մասնակցելու հայտ է ներկայացրել 6 կուսակցություն եւ մեկ դաշինք: Այս մասին տեղեկանում ենք Արցախի ԿԸՀ կայքից:

2020թ. փետրվարի 15-ի ժամը 12.00-ի դրությամբ ս.թ. մարտի 31-ին անցկացվելիք համապետական ընտրություններին մասնակցելու համար ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովն ստացել է

Արցախի Հանրապետության նախագահի 12 թեկնածուների գրանցման փաստաթղթեր:

Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու համար ընտրական ցուցակ են ներկայացրել 6 կուսակցություններ՝ Արցախի Պահպանողական կուսակցությունը՝ 16 թեկնածուների,

«Միասնական հայրենիք» կուսակցությունը՝ 62 թեկնածուների,

«Ազգային վերածնունդ» կուսակցությունը՝ 20 թեկնածուների,

- «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցությունը՝ 33 թեկնածուների,
- Արցախի Ժողովրդավարական Կուսակցությունը՝ 33 թեկնածուների,
- Արցախի «Արդարություն» կուսակցությունը՝ 35 թեկնածուների ընդգրկմամբ:

Ընտրական ցուցակ է առաջադրել մեկ կուսակցությունների դաշինք՝ «Ազատ Հայրենիք-ՔՄԴ» կուսակցությունների դաշինքը՝ 65 թեկնածուների ընդգրկմամբ:

Ներկայացված փաստաթղթերը ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում ուսումնասիրվում են: Առաջադրված բոլոր ընտրական ցուցակներին հնարավոր կլինի ծանոթանալ ս.թ. փետրվարի 18-ին՝ Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում:

Արցախի Հանրապետության նախագահի թեկնածուներ են առաջադրվել՝

Իսրայելյան Ռուսլան Էդուարդի

Բալասանյան Վիտալի Միխայիլի

Մայիլյան Մասիս Սամվելի

Ամիրյան Սերգեյ Վասիլիի

Բաբայան Դավիթ Կլիմի

Իշխանյան Դավիթ Ռուբենի

Ղուլյան Աշոտ Վլադիմիրի

Բալայան Քրիստին Գրիգորիի

Խանումյան Հայկ Ռուբենի

Հարությունյան Արայիկ Վլադիմիրի

Լալայան Բելա Լաերտի

Պողոսյան Մելսիկ Ռաֆայելի

ԵԽԽՎ համազեկուցողները մտահոգություն են հայտնում կառավարություն-ՍԴ լարվածության վերաբերյալ

ԵԽԽՎ համազեկուցողները մտահոգություն են հայտնում հայաստանյան ինստիտուտների միջեւ լարվածության բարձր մակարդակի վերաբերյալ:

«Մենք շատ մտահոգված ենք Հայաստանի երկու պետական ինստիտուտների՝ Վարչապետի գրասենյակի եւ Սահմանադրական դատարանի նախագահության միջեւ լարվածության բարձր մակարդակով», - հայտարարել են ԵԽԽՎ Հայաստանի մշտադիտարկման համազեկուցողներ Անդրեյ Շիրչելը (Սլովենիա, Եվրոպայի ժողովրդական կուսակցության խումբ) եւ Կիմմո Կիլյունեն (Ֆինլանդիա, Սոցիալիստների, դեմոկրատների եւ կանաչների խումբ):

Հայտարարության տեքստը տեղադրված է ԵԽԽՎ-ի պաշտոնական կայքում:

«Զսպումներն ու հակակշիռներն անհրաժեշտ են ցանկացած ժողովրդավարական համակարգում: Սա ենթադրում է, որ բոլոր ինստիտուցիոնալ ուժերը պետք է գործեն համաձայն օրենքի գերակայության եւ հարգեն այն իրենց գործողություններով եւ խոսքով, այդ թվում՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի կապակցությամբ: Եթե նրանք չեն կարողանում փոխգործակցել այս սկզբունքների համաձայն, նրանք քայքայում են եւ վնասում միմյանց: Ուստի մեզ մտահոգում են աննախադեպ մակարդակի հասած այս լարվածության այն երկարաժամկետ վնասները, որ կարող են հասցվել ամբողջ դատական իշխանությանը, որի նկատմամբ վստահությունն արդեն իսկ շատ ցածր է», - ասել են համազեկուցողները:

«Մինչ այժմ Կառավարությունն ու խորհրդարանը հարգել են իրավիճակը կարգավորելու իրավական ընթացակարգերը: Ավելին, իշխանությունները հայցել են Վենետիկի հանձնաժողովի կարծիքը Սահմանադրական դատարանի դատավորների վաղաժամկետ կենսաթոշակի անցնելու մեխանիզմի վերաբերյալ: Համաձայն եվրոպական չափանիշների՝ Վենետիկի հանձնաժողովն ընդգծել է, որ վաղաժամկետ կենսաթոշակի անցնելը պետք է լինի միմիայն կամավոր, եւ որ այս սկզբունքը պետք է պահպանվի: Որպես համազեկուցողներ, մենք ուշադիր հետեւելու ենք, որ Հայաստանի իշխանությունները շարունակեն գործել այս ծանապարհով, նույնիսկ եթե այս մեխանիզմի նպատակը՝ այն է 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների ոգին պահպանելը, թվում է վավեր», - հավելում են նրանք:

Համազեկուցողները նաեւ նշել են. *«Մենք արդեն շեշտել ենք, որ քաղաքական խաղացողները պետք է զերծ մնան գործողություններից եւ հայտարարություններից, որոնք կարող են ընկալվել որպես դատական համակարգի վրա ճնշման գործադրում: Բացի այդ, մենք կոչ ենք անում բոլոր կողմերին՝ նվազեցնել լարվածությունը»:*

«Վերջապես, այս լարվածությունը չպետք է ստվերի Հայաստանում իրականացվող բարեփոխումների անհրաժեշտությունը՝ լինեն դրանք նախապատրաստական փուլում գտնվող բարեփոխումները, թե բարեփոխումներ, որոնք արդեն մեկնարկել են Եվրոպայի խորհրդի համար հետաքրքրություն ներկայացնող շատ ոլորտներում», - եզրափակում են նրանք: ■

Բուքիքիոն՝ Հայաստանի ՍԴ շուրջ իրավիճակի մասին

Հայաստանում բոլոր կողմերը պետք է զսպվածություն, փոխադարձ հարգանք եւ կառուցողական ինստիտուցիոնալ համագործակցություն դրսեւորեն: Այս մասին ասվում է Վենետիկի հանձնաժողովի ղեկավար Ջանի Բուքիքիոյի երկուշաբթի օրը հրապարակված հայտարարության մեջ:

Բուքիքիոն մտահոգություն է հայտնել Հայաստանի Սահմանադրական դատարանի շուրջ ծավալվող բաց առճակատման առնչությամբ:

«Ես կիսում եմ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի համազեկուցողների մտահոգությունը այդ հարցում», - նշել է նա:

Վենետիկի հանձնաժողովի ղեկավարը հիշատակել է 2019թ. հոկտեմբերին Վենետիկի հանձնաժողովի եզրակացության մեջ տեղ գտած առաջարկներն այն մասին, որ Սահմանադրական դատարանում վաղաժամ թոշակի անցնելու ցանկացած սխեմա պետք է խիստ կամավոր հիմունքներով լինի, բացառի ցանկացած քաղաքական կամ անձնական ճնշում դատավորների վրա, եւ պետք է մշակվի այնպես, որ չազդի ընթացքի մեջ գտնվող գործերի արդյունքի վրա:

«Վերջին հայտարարությունները եւ ակտերը չեն համապատասխանում այդ չափանիշներին եւ չեն նպաստում լարվածության լիցքաթափմանը», - նշել է նա:

Նրա խոսքով՝ ժողովրդավարության մշակույթը եւ հասունությունը պահանջում են ինստիտուցիոնալ զսպվածություն, բարեխղճություն եւ փոխադարձ հարգանք պետական ինստիտուտների միջեւ:

Բուքիքիոն կրկին Հայաստանում բոլոր կողմերին կոչ է արել դրսեւորել զսպվածություն եւ թուլացնել լարվածությունը՝ «Հայաստանի Սահմանադրության նորմալ գործունեության ապահովման նպատակով»: ■

Նախագահը հետմահու պարգեւատրել է ձնահոսքի հետեւանքով մահացած 3 զինծառայողին

Նախագահ Արմեն Սարգսյանը հրամանագիր է ստորագրել, որով ծառայողական պարտականությունները կատարելիս ցուցաբերած անձնվիրության համար Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ներքոհիշյալ զինծառայողներին հետմահու պարգեւատրել է Մարտական ծառայության մեդալով:

Պարգեւատրվել են՝

Տիգրան Արմենի ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԸ թիվ N զորամասի պայմանագրային զինծառայող, կրտսեր սերժանտ,

Նվեր Տիգրանի ՇԱՀԲԱԶՅԱՆԸ թիվ N զորամասի պայմանագրային զինծառայող, կրտսեր սերժանտ,

Կարապետ Սեդրակի ՆԱԶԱՐՅԱՆԸ թիվ N զորամասի պայմանագրային զինծառայող, շարքային:

Հիշեցնենք, որ փետրվարի 7-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի մարտական հենակետերի հերթապահության հերթափոխի ժամանակ, ձյան սողանքի հետեւանքով, պայմանագրային զինծառայողներ Կարապետ Սեդրակի Նազարյանի, Տիգրան Արմենի Արզումանյանի, Նվեր Տիգրանի Շահբազյանի մահվան եւ Համլետ Գրենիկի Միրզոյանի մարմնական վնասվածքներ ստանալու դեպքի առթիվ ՀՀ ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչության իններորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով (Ծառայության նկատմամբ պետի կամ պաշտոնատար անձի անփույթ վերաբերմունքը՝ եթե անզգուշությամբ առաջացրել են ծանր հետեւանքներ) հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն:

Գորիսը վերջին հրաժեշտը տվեց ողբերգորեն մահացած իր զինվոր զավակին

Համընդհանուր սգի մեջ հայտնված Գորիսի երկնակամարից անգամ ձյան տեսքով արտասուք էր ծորում փետրվարի 17-ին...

23-ամյա լեյտենանտ Հայկ Ասրյանը մահացել է 2020 թ. փետրվարի 14-ին՝ ճակատի շրջանում ստացած հրազենային վնասվածքից, դեռեւս չպարզված հանգամանքներում:

Եռ նախօրյակին, երբ Հայկ Ասրյանի աճյունը հասցրել էին հայրական տուն, ամբողջ Գորիսը, կարելի է ասել, մասնակցում էր նահատակ զինվորի քաղաքացիական հոգեհանգստին:

Հուղարկավորությունն էլ, որ տեղի ունեցավ փետրվարի 17-ին, ոտքի էր հանել հարյուրավոր գորիսեցիների...

Մարդիկ ոչ միայն սգում էին մեր զինվոր զավակի կորուստը, այլ փորձում հասկանալ՝ ինչո՞ւ, ինչպե՞ս...

Վերջին ամսում մահացած զինվորների շուրջ ահագնացող խոսակցությունները, հատկապես համացանցային տիրույթում թեժացած քննարկումները, հնչող վարկածները (նաեւ շահարկումները) տարակույսների որոշակի ալիք են առաջ բերել...

Հայաստանի եւ Արցախի իշխանությունների խնդիրն է՝ ամեն գնով բացահայտել յուրաքանչյուր զինվորի կորստյան դեպքը:

Միայն այդպես հնարավոր կլինի վերջ տալ ասեկոսեներին եւ ցրել տարակույսների թանձր մշուշը:

23-ամյա լեյտենանտ Հայկ Ասրյանը մահացել է 2020 թ. փետրվարի 14-ին՝ ճակատի շրջանում ստացած հրազենային վնասվածքից, դեռեւս չպարզված հանգամանքներում:

Զինվորի ինքնասպան լինելու վարկածը զայրույթով են ընդունում ոչ միայն հարազատներն ու մերձավորները, այլեւ նրա ընկերները, ճանաչողները:

Պայմանագրային զինծառայող էր՝ երեք տարի ժամանակով, որի կեսն արդեն անցել էր:

Գոհ էր ծառայությունից, ծառայության պայմաններից, բազում ծրագրեր ուներ...

Գորիսի Ակսել Բակունցի անվան դպրոցի շրջանավարտ էր:

Սովորել էր Արմենակ Խամփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանում, մինչ այդ ավարտել Երեւանի պետական համալսարանի ինֆորմատիկայի եւ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը:

Քաղաքացիական հոգեհանգստի ժամանակ, երբ չէր դադարում մարդկանց հոսքը, երբ խումբ-խումբ կանգնած գորիսեցիները զրուցում էին եւ միմյանց սփոփելու փորձեր անում, մեր ականջին հասավ Հայկի մոր խոսքը՝ *«Գոնե վերջին դեպքը լինի հայոց բանակում, գոնե վերջին մայրը լինեմ ինքս, ով զինվոր զավակ է կորցնում...»:*

Այդ խոսքերը լսելուց հետո հնարավոր չէր վերստին ու նորովի չհասկանալ, թե ինչպես է մեր ժողովուրդը պատմության կեռմաններում դարերով դիմացել ամենադժվար փորձություններին նույնիսկ:

Հնարավոր չէր նորովի չհասկանալ, որ հազարամյակների փորձություններին դիմացել ենք հատկապես մեր՝ հիրավի հերոս մայրերի տոկունության, հայրենապաշտության շնորհիվ:

Եվ ուրեմն՝ այդ ամենից հետո անհնար է չհավատալ՝ նման ակունք եւ արմատ ունեցող հայոց զինվորը երբեք ու ոչ մի պարագայում չի ընկրկի այսուհետ եւս ու կապահովի մեր սրբազան սահմանների անձեռնմխելիությունը, տեր կկանգնի հայ ժողովրդի արժանապատվությանը...

Սամվել Ալեքսանյան

Սյունիքում ձնահոսքի տակ մնացած 4 զինծառայողից 3-ի դիերը հայտնաբերվել են, մեկի վիճակը բավարար է

Սյունիքի մարզում՝ N զորամասի պահպանության տեղամասում, փետրվարի 7-ին, ժամը 16:50-ի սահմաններում, ձնահյուսի տակ է մնացել չորս պայմանագրային զինծառայող:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, ձեռնարկված որոնողական-փրկարարական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել են ձնահոսքի տակ մնացած պայմանագրային զինծառայողներ, շարքային Կարապետ Սեդրակի Նազարյանի (ծնվ. 1991թ., զինված ուժերում էր 2018թ.-ից, Քաշաթաղի ՀԿ), կրտսեր սերժանտ Տիգրան Արմենի Արզումանյանի (ծնվ. 1994թ., զինված ուժերում էր 2018թ.-ից, Սյունիքի ՄՀԿ) եւ կրտսեր սերժանտ Նվեր Տիգրանի Շահբազյանի (ծնվ. 1995թ., զինված ուժերում էր 2018թ.-ից, Սյունիքի ՄՀԿ) դիերը:

Պայմանագրային զինծառայող, շարքային Համլետ Գրենիկի Միրզոյանին (ծնվ. 1998թ., զինված ուժերում է 2018թ.-ից, Սյունիքի ՄՀԿ) հաջողվել է դուրս բերել ձնահյուսից: Հայտնաբերված զինծառայողը ստացել է մարմնական թեթեւ վնասվածքներ, առողջական վիճակը գնահատվում է բավարար:

Դեպքի հանգամանքները պարզելու նպատակով կատարվում է քննություն:

■

Սա է պահի հրամայականը կամ հորդոր՝ Հայաստանի եւ Արցախի իշխանություններին

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երջին մեկուկես ամսում ծառայության մեջ սպանված մեր զինվորների վշտի սուգը, անտարակույս, համազգային է...

Հայոց բանակում տեղի ունեցող այս ողբերգական իրադարձությունները նպատակամիտված կերպով քաղաքականացնող ցանկացած ուղղորդված ու չհիմնավորված կարծիք միանշանակ ոչնչացնում է մեր միասնականությունը, եւ եթե այդ միտումն անպատասխանատու հայտարարություններով շարունակվի, ապա կործանարար աղետ է բերելու մեր ժողովրդի գլխին...

Իշխանությունների առջեւ պետք է ստույգ հանրային պահանջ դրվի: Եվ դա՝ հանցագործությունները կատարողներին կամ դրանց համար միջավայր ստեղծողներին շատ արագ հայտնաբերելն ու խստագույնս պատժելը պիտի լինի:

Սա՛ է պահի հրամայականը...

Այս անգամ՝ երկրորդ մրցանակով

Ստամբուլում փետրվարի 15-ին տեղի ունեցած Բալկանյան երկրների ձմեռային 25-րդ առաջնությունում Հայաստանի աթլետների հավաքականի կազմում մասնակցում էր կապանցի երկու մարզիկ՝ եռացատկորդ Լեւոն Աղասյանը եւ Մարիետա Մինասյանը, ով հանդես եկավ հեռացատկ եւ եռացատկ ձեւերում:

Ինչպես «Սյունյաց երկրին» հայտնեց Կապանի համայնքապետարանի սպորտի ոլորտի պատասխանատու Արշամ Սարգսյանը, եռացատկ մրցաձեւում 16 մետր 44 սմ արդյունքով գրավեց երկրորդ պատվավոր տեղը:

Մարիետա Մինասյանն իր հնարավորություններից ցածր հանդես եկավ: Նախորդ տարվա նույն մրցումներին Լեւոն Աղասյանը հաղթող էր ճանաչվել՝ այս առաջնության հաղթողին գերազանցելով երեք սանտիմետր:

Ինչեւէ, մեր հայրենակցին մաղթում ենք մարզական նոր հաջողություններ, մանավանդ տարին օլիմպիական է, եւ Լեւոնը վարկանիշային նորմատիվը լրացնելու դեպքում (17 մ 14 սմ) կմասնակցի տարվա գլխավոր իրադարձությանը, ինչպես չորս տարի առաջ կայացած օլիմպիադային: Առաջադրանքը դժվարին է, բայց ոչ անիրականանալի: Հուսանք եւ սպասենք:

Վահրամ Օրբելյան

Սյունիքը եւ ռուսական ֆենոմենը

1

Հնագույն հիշատակությունները, անշուշտ, մեր կողմերինն են: 10-րդ դարում պատմիչ Մովսես Դասխուրանցին, որ Կաղանկատվացու շարունակողն է, հաղորդելով Պարսկաստան-Հայաստան ու Աղվանք արշաված դելմիկների մասին, գրում է. *«Հյուսիսային կողմերից հայտնվում է այլակրոն, անծանոթ մի ցեղ, որին ռուզիկ են անվանում, սրանք, ոչ ավելի, քան երեք ժամ ընթանալով, մրրկի նման համատարած Կասպից աշխարհածովի ելքով հանկարծ հասան Աղվանքի Պարտավ մայրաքաղաքը, (Կղնկ. էջ 264):*

Կասկած չկա, որ այս հիշատակման ռուզիկները ռուսներն են, որոնք, անշուշտ, նավարկել են Աթլ (Վոլգա) գետով, որի մեծությունն ու գեղեցկությունը զարմանքով նկարագրել է Կիրակոս Գանձակեցին:

Ըստ լեզվաբանների՝ ռուս էթնոնիմը ծագում է հինսլավոնական կամ ցեղանունից: Այլ մի ստուգաբանությամբ՝ շեկ կամ կարմրաթուն է նշանակում: Բյուզանդական, հայկական եւ ռուսական միջնադարյան աղբյուրների վկայությամբ՝ Արլ. Հայաստանի վերջին՝ Բաղաց կամ Կապանի թագավորությունը (970-1170) առեւտրական կապեր ուներ Կիեւյան Ռուսիայի հետ: Սյունեցի վաճառականները հասել են մինչեւ Կամա-Վոլգյան միջագետք, մինչեւ Բոլգար քաղաք: Մանքերման (Կիեւ) երկրում հիմնել են գաղթօջախ: Վլադիմիր-սուզդալյան իշխան Անդրեյ Բոգոլյուբսկու զորաջոկատներից մեկն ուղարկվել է՝ գործելու սելջուկ Շամսեդին Ելտկուզի դեմ, ի պաշտպանություն պաշարված Բաղաբերդի, սակայն տեղ չի հասել անհայտ պատճառներով:

Պարզ է, որ 12-րդ դարից հայ-ռուսական առեւտրային հարաբերությունների զարգացմամբ ի հայտ է եկել ռուսական դիվանագիտության՝ Անդրկովկասն ազդեցության ոլորտ դարձնելու հեռանկարը:

12-րդ դարում հայ եկեղեցին իր ինքնուրույնությունից զրկելու միջազգային ոտնձգությունների դեմ անհաշտ պայքար էր մղում Գր. Տուտեորդին եւ կոչ անում դիմել ռուս ժողովրդին՝ «Քրիստոնեությամբ պատուեալ մեծափառ եկեղեցին ըռուզաց»: Սա միջնադարյան հայ իրականության՝ հյուսիսից օգնություն ակնկալելու առաջին փաստն է: Ռուս ժողովրդին իրենց ստեղծագործություններում անդրադարձել են միջնադարյան հայ տաղերգուներ Ֆրիկը, Հովհաննես Սարկավագը, Նահապետ Քուչակը: 15-17րդ դարերում Մոսկվան այնքան հռչակավոր էր, որ մեր տաղերգուները այն բարձր են դասել Հռոմից: Ուշագրավ է, որ 12-րդ դարում հայերեն է թարգմանվել «Բորիսի եւ Գլեբի վարքը»:

Հայ-ռուսական հարաբերությունները 17-րդ դարի 2-րդ կեսին վերաճել էին քաղաքական կապերի (1678թ. Էջմիածնի գաղտնի խորհրդակցությունը): Դրանք պատասխանատու, մայոր Կարեն Բաբայանի հետ:

Քննարկվել են 2020 թվականի սահմանապահ ջոկատի գործունեությունը լուսաբանելուն միտված հարցեր, մշակվել միջոցառումներ այդ ուղղությամբ:

«Սյունյաց երկիր»

Մեղրու սահմանապահ ջոկատը եւ «Սյունյաց երկիրը» կընդլայնեն համագործակցությունը

2020 թվականի փետրվարի 11-ին «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբն այցելել է Մեղրու ռուսական սահմանապահ ջոկատ եւ հանդիպում ունեցել ջոկատի հրամանատար, գնդապետ Ալեքսանդր Բուրշտինի եւ ջոկատի հրամանատարի տեղակալ, շտաբի պետ, գնդապետ Իգոր Պանկովի, ինչպես եւ զորամասի՝ հանրության հետ կապերի

Օրին մեր հայրենակիցն է, սյունեցի: Կաթոլիկ քարոզիչ Կրուսինսկին Օրիի ծննդավայր է նշել Ղափանը, Լեոն՝ Ղափանի անհայտ գյուղերից մեկը: Նրան համարել են նաեւ Նախիջեւանցի, վայոցձորեցի՝ սերված Պռոշյան տոհմից:

Օրիի մասին առաջին անգամ ընդարձակ ուսումնասիրություն է տվել ռուս նշանավոր պատմաբան Ս. Սոլովյովը 1868թ (18-րդ հատոր): Նրա եվրոպական գործունեության մասին 1893թ. Մյունխենում դասախոսություն է կարդացել պրոֆ. Հայգելը, որը նրան համարել է Դյուսելդորֆի հայ վաճառական:

17-րդ դարի վերջին հայ ժողովուրդը ոչ միայն կեղեքվում էր պարսկաօսմանյան զավթիչների կողմից, այլեւ մեծ չափերով ենթարկվում ազգային ճնշումների ու հալածանքների: Պարսից ֆեոդալական մասնատվածության պայմաններում խաները մասնավորապես Ղարաբաղում ու Սյունիքում հայերի հետ վարվում էին անպատմելի դաժանություններով, խստացնում հարկերը, ստիպում կրոնափոխ լինել: Հայրենիքն ազատագրելու գործով Օրին զբաղվում է անգլիական գերությունից ազատվելուց հետո: Հաստատվելով Դյուսելդորֆում՝ նա ծանոթանում է Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմի հետ, որն Ավստրիայի Լեոպոլդ կայսեր քենակալն էր: Կուրֆյուրստը Օրիի միջոցով նամակներ է ուղարկում հայ մելիքներին, ինչպես նաեւ վրաց իշխանին Օրիին բանակցությունների համար լիազորություններ տալու վերաբերյալ: 1699թ-ին Օրին Անգեղակոթ՝ Մելիք Սաֆրազի մոտ է գալիս (սա Էջմիածնի ժողովի մասնակից էր): Էջմիածնի եւ Աղվանքի (Գանձասարի) կաթողիկոսներից մերժում ստանալուց հետո նա Անգեղակոթում հակառակ պատկերն է տեսնում: Մելիքների ժողովը նամակ է գրում Պֆալց: Նամակը հետագայում պատճենվում ու ներկայացվում է Պետրոս Մեծին, որովհետեւ ինչպես պարզվել էր, կուրֆյուրստի շահադիտական հետաքրքրություններն առաջնահերթ էին հայերի ճակատագրից: Նամակի վերաբերմամբ մենք գործ ունենք Սյունիքի (Ղարաբաղի) հույժ հետաքրքիր մի դիրքորոշման հետ: Մելիքներն իրենց գրած թղթերի մեջ իրենց անվանում էին. *«Մենք՝ մեծ Հայաստանի գլխավորներս եւ ատենակալներս»:*

Սա ցույց է տալիս, որ Սյունիքի հայ մելիքներն իրենց տեր էին ճանաչում ողջ Հայաստանի վրա:

1701թ. հուլիսի 25-ին Օրին իր ծրագիրը ներկայացնում է Պետրոս Մեծին: Թագավորը գրավոր ոչ մի խոստում չի անում, բայց բանավոր հուսադրում է: Նա հայ դիվանագետին տալիս է կառք ու թիկնապահներ, շնորհում գնդապետի աստիճան եւ 50 հոգանոց շքախմբով որպես դեսպան ուղարկում Պարսկաստան: 18-րդ դարը Ռուսաստանում նաեւ նշանավորվում է հայ ժողովրդի նկատմամբ եղած հետաքրքրությունների վերելքով: Հայ ուսյալներն ավելի շատ են ներգրավվում ռուսական մշակույթի եւ զինվորականության մեջ: Ռուսիայում Ի.Օրիին հետեւում է հայազգի քաղաքագետների բազումքը:

Ցարական արքունիքը սկսել էր տարբերակված ըմբռնել Կովկասը: *«Ամեն կերպ աշխատեցեք հայերին հրավիրել, իսկ մուսուլմանների թիվը որքան հնարավոր է պակասեցնել, բայց այնպիսի գաղտնի միջոցներով, որ իրենք ոչինչ չհասկանան»,* – գրել է Պետրոս Ա-ն Մատյուշկինին:

Ցարական կառավարությանը հայերը պետք էին հատկապես արտադրական ուժերի զարգացման համար: Այդ քաղաքականությունը խրախուսել սկսել էր դեռ Ալեքսեյ Միխայլովիչ ցարը: Պատմագրությանը հայտնի են Պարսկաստանից ներգաղթած հայերի համար արտոնությունների սահմանման՝ ցարական 1667, 1711, 1725, 1744, 1762, 1764, 1765, 1768, 1779, 1797, 1799, 1802թթ. հրամանագրերը:

Ռուսական կողմնորոշման համար մեծ հարված էր Պետրոս Ա-ի մահը (1725թ-ին) Դավիթ Բեկի իշխանության հաստատման տարիներին: Այդ ժամանակներից էլ հայտնի է Մխիթար սպարապետի՝ ռուսաց արքունիքին գրած նամակը:

Անդրկովկասին տիրելը եղել է Պետրոս Ա-ի նվաճողական քաղաքականության առանցքային խնդիրներից մեկը, որի կենսագործման համար մեծ ջանքեր է ներդրել Եկատերինա կայսրուհին: Անկախ Հայաստանի անունը շրջանառվել է նրա կառավարման տարիներին: Ծրագիրը մշակել են Հովսեփ արքեպ. Արղությանը եւ Հովհաննես Լազարյանը: Կայսրուհու հրամանով ծրագրի կենսագործմանը ծանոթացել է մեծ զորավար Ա.Վ.Սուվորովը, որը 1780-1781թթ-ին գտնվելով Աստրախանում նամակագրություն է ունեցել Ղարաբաղի հայ մելիքների հետ:

Ազատագրական պայքարը՝ ռուսական կողմնորոշմամբ, 19-րդ դարի սկզբին հայոց մեջ դարձել էր անկասելի: Մեծ ակտիվություն են ցուցաբերում Դավիթ Բեկի իշխանության անկումից հետո Ղարաբաղից ու Զանգեզուրից Ղզլար, Մոզդոկ եւ Ռուսաստանի այլ վայրեր գաղթած հայերը:

1801թ Ռուսաստանին են միանում Վրաստանը, Լոռին, Շամշադինը, 1804-ին՝ Գանձակը, 1805թ-ին՝ Ղարաբաղը: Մայիսի 14-ին Ղարաբաղի եւ Գանձակի սահմանագծի գլխին՝ Կյուրակչայ (Թնագետ) գետի ափին, վրանի մեջ ռուսական բանակի գեներալ Ցիցիանովը եւ Ղարաբաղի Իբրահիմ խանը ստորագրեցին դաշնագիր, որով Ղարաբաղի խանությունն այսուհետեւ հպատակվում էր Ռուսաստանին: Դաշնագրով սահմանն անցնում էր Ողջի գետով եւ Զանգեզուրի լեռնաշղթայով: Դա բացատրվում էր թուրք խանի երկդիմի պահվածքով: Ինչպես ցույց տվին իրադարձությունները, նա հետագայում բազմիցս խախտեց դաշնագիրը, հանդես եկավ մերթ պարսից, մերթ ռուսաց կողմից: Ձորքում աղոտ հիշողություն է պահպանվել, որ երբեւէ ռուսաց եւ պարսից սահմանը եղել է Ողջի (Ուղուր) գետը:

Մեղրու գավառակն անջատվեց Ղարաբաղի խանությունից եւ միացավ Ղարադաղի խանությանը:

Ռուսաստանին միանալուց հետո ցարական արքունիքը չշտապեց վարչական նոր բաժանում անել ու բարելավել կառավարումը: Դա, թերեւս, բացատրվում է ռուս-պարսկական հարաբերությունների չնվազող լարվածությամբ: Գավառակները շարունակում էին բաժանված մնալ մահալների, ինչը պահպանվեց մինչեւ 1822թ., երբ խանությունը ստացավ Ղարաբաղի պրովինցիա անվանումը: Մահալները նախկինի պես կառավարում էին մելիքները, որոնք ենթարկվում էին Շուշիում նստող խանին:

1813-ին գեներալ Ոտիշչեւը նախապատրաստվում էր արշավել Թավրիզի վրա եւ Կասպից ծովով ափհանում կատարել հարավում: Պարսից կառավարությունը ստիպված էր հաշտության գնալ: Բանակցությունները ընթացան Գյուլիստան գյուղում (Խաչեն), 15 օր: Հոկտեմբերի 12-ին գեներալ Ոտիշչեւն ու Միրզա Աբուլ-Հասան խանը ստորագրեցին դաշնադրությունը: Դերբենդից մինչեւ Ղարաբաղ երկրամասն անցնում էր Ռուսաստանին: Բայց Ոտիշչեւը Մեղրին դարձյալ զիջեց:

Գյուլիստանի դաշնադրությամբ վերջանում էր ռուս-պարսկական առաջին պատերազմը:

Այնուհանդերձ, խանական վարչակարգը շարունակվում էր, որքան էլ Գ-ի դաշնագրությունը երկրում կատարվածի իրավական վավերացումն էր:

Այդ ժամանակներում վարչական բաժանումն այսպիսին էր. Սիսիանի մահալ(Բռնակոթ), Տաթեւի մահալ (Տաթեւ), Կյուպարայի մահալ (Ագարակ, մինբաշի Մելիք Փարսադան), Աճանան մահալ (Առաջաձոր), Բարգուշատի մահալ, Բաղաբյուրտի մահալ, Փիսյանի մահալ, Չավնդուրի մահալ: Հետագայում Թուրքմենչայի դաշնադրությամբ սահմանը հետ քաշվեց մինչեւ Արաքս, Մեղրին էլ միացավ ռուսական կալվածքներին, Աճանանի մի մասն անցավ նորակազմ Չավնդուրին, Տաթեւի մահալի արեւելյան հատվածը Գորիս ոստանով առանձնացվեց որպես Զանգեզուրի մահալ:

1805թ-ից հետո սկսվեց բնակչության ներգաղթը Պարսկաստանից, որը մեծացավ Գ-ի դաշնադրությունից հետո ու դարձավ զանգվածային Թուրքմենչայի դաշնադրությունից հետո:

Սյունիքն աստիճանաբար հարմարվեց ու տիրացավ ռուսական կառավարչաձեւերին, որոնք խանականի համեմատ ավելի սրտամոտ էին մեր նախնիներին:

Իր դեմ չգրգռելու համար ռուսական կառավարությունը զգուշությամբ էր մոտենում մահմեդական ղեկավար շերտերի իրավունքներին: Հետեւելով խանական կարգ ու կանոնին՝ նոր կառավարիչները շարունակում էին հողեր բաժանել թուրք բեկերին ու աղալարներին, որոնք իրենց իրավունքները փոխանցում էին ժառանգներին:

Սակայն ռուսական կառավարությունը սկսեց հասկանալ, որ գրավված տարածքներում գործ ունի տարբեր մակարդակներ ունեցող ժողովուրդների հետ, որ մուսուլմանները երբեք էլ հուսալի չեն ռուսական իրականության համար: Ցարը աստիճանաբար հակվել էր հայերին Պարսկաստանից Արեւելյան Հայաստանում վերաբնակեցնելու մտքին: Դա, առաջին հերթին, պետության սահմանների ամրապնդման երաշխիք էր: Նիկոլայ Ա ցարը, Պասկեւիչին ուղղված նամակում ասել է.

Արեւելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացմամբ հիմք դրվեց տնտեսության կազմակերպման առավել առաջադիմական եղանակներին, ամրակայվեցին իրավական նոր հարաբերություններ: Միջնադարյան մահմեդական խավարամտությանն աստիճանաբար փոխարինեցին Հյուսիսափայլի շողերը: Ղարաբաղի պրովինցիայում աստիճանաբար կյանքի կոչվեցին ռուսական պետական ինստիտուտի կառույցները:

Ցարական հրովարտակով սկսեցին կազմակերպվել բնակչության հաշվառում, մարդահամարներ, գույքի հաշվառում, ազգագրական ուսումնասիրություններ եւ այլեւ: Ներգաղթը կազմակերպվել էր պատշաճ հոգատարությամբ: Պարենավորման խնդիրը լուծելու համար ներգաղթողներին բաժանել են 150-300 հոգանոց խմբերի, յուրաքանչյուրին կցված էր մեկ սպա եւ 2-5 կազակ: Յուրաքանչյուր ընտանիքին որպես նպաստ տրվել է 6-7 ռուբլի:

Նոր կազմակերպված Հայկական մարզում 1829-31թթ. բնակչության թիվը 25 հազարից հասել էր 82377 մարդու: 1891թ. Արլ.Հայաստանում հայ բնակչության թիվը հասել էր 250895-ի, 1913-ին՝ 1000100-ի:

Նորահաս ցարական ժամանակներում Պետերբուրգի պահանջով եւ հովանավորությամբ սկսել են ազգագրական ուսումնասիրությունները:

■

Երկու օր (փետրվարի 11-13-ը) փակ էր Գորիս - Սիսիան ավտոմայրուղին

Մեղրեցի ճանապարհաշինարարները շուրջօրյա հերթապահություն են իրականացնում

էջ 1

ժամանակ ճանապարհները մշակելու համար կուտակել են անհրաժեշտ քանակությամբ աղ եւ ավազ, իսկ ձնամաքրման եւ ձնահեռացման տեխնիկայով Մեղրու «ՃՇՇՁ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը միշտ էլ ապահովված է եղել: Ճանապարհային տնակում էլ ապահովված են անհրաժեշտ հանգստի պայմաններով ու սննդով, դեռ մի բան էլ լրագրողներիս՝ սուրճով հյուրասիրեցին:

Եղանակային բարդ պայմաններին ճանապարհատրանսպորտային պատահարներից խուսափելու համար շատ բան պայմանավորված է վարորդների հմտությամբ եւ պատասխանատվությամբ: *«Ինչ խորհուրդ կտայիք վարորդներին»,* – դիմում ենք աշխղեկ Ռոման Սարգսյանին: *«Դա ամենախնդրահարույց հարցն է,* – պատասխանում է, – *որոշ վարորդներ չեն գիտակցում խնդրի հրատապությունը, նախ ճանապարհները ձյունից մաքրելիս զգուշացնում ենք, որ մի քանի րոպե պիտի կանգնեն՝ ձնամաքրման եւ ճանապարհների մշակման աշխատանքներ կատարելու համար, բայց չեն ենթարկվում մեր հորդորին, եւ խցանումներ են առաջանում: Բացի այդ՝ որոշ վարորդներ շարունակում են տրանսպորտային միջոցն օգտագործել առանց ձմեռային անվադողերի, անհրաժեշտության դեպքում անիվներին շղթաներ չեն կապում, ինչը տհաճ միջադեպերով է հղի: Նաեւ ծանրաքաշ բեռնատարները նախատեսվածից ավելին են բարձում, բարձր լեռնային այս գոտում թթվածինը սակավ է, ինչի պատճառով շարժիչը ողջ հզորությամբ չի աշխատում, եթե անվադողերն էլ «կապրոնից» են, ապա շատ հնարավոր է, որ մեքենան մնա կես ճանապարհին»:* Զրուցակիցս նաեւ լեռնային այդ պայմաններում հսկա բեռնատարները

վարելու նրբություններ է հաղորդում, այն է՝ վերելքը հաղթահարելիս արագությունը չպիտի փոխել, այլ ցածր արագությամբ երթեւեկել:

Ինչպես միշտ, հարգանքով եւ վստահության զգացումով ենք հրաժեշտ տալիս մեղրեցի ճանապարհաշինարարներին, իսկ աշխատանքային օրվա ավարտին, երբ վերադառնում էինք խմբագրություն, նկատեցինք, որ ավելի անցանելի է դարձել ճանապարհը, մանավանդ լեռնանցքից դեպի Քաջարան իջնող հատվածում:

Ճանապարհաշինարարներից հետաքրքրվեցինք նաեւ Մեղրի-Ծավ-Կապան այլընտրանքային ճանապարհով, որի ձմեռային սպասարկումը եւս մեղրեցի ճանապարհաշինարարներն են իրականացնում:

Տեղեկացրին, որ ընկերության տեխնիկայի մեծ մասը կենտրոնացրել են Մ-2 միջպետական ճանապարհի վրա, որն ավելի քան ռազմավարական նշանակություն ունի: Բայց եւ այլընտրանքային ճանապարհն աչքաթող չեն անում: Ընդ որում՝ տեսադաշտում են նաեւ տարածաշրջանի գյուղական բնակավայրերի, այսպես կոչված, միջհամայնքային ճանապարհները, որոնց անցանելիությունն ապահովում են ձյունաշատ օրերին:

Վահրամ Օրբելյան

Հակասական խոհերով հեռացանք Ալվանքից

Հայաստան աշխարհում յուրաքանչյուր գյուղ իր ճակատագիրն ունի՝ ոչ մեկին չնմանվող, ինչպես, ասենք, Մեղրու տարածաշրջանի Ալվանքը:

2 նցյալ տարվա մայիսին նշվեց գյուղի վերաբնակեցման եւ դպրոցի «հայացման» 30-ամյակը: Եվ սույն հրապարակման մեջ հիմնականում անդրադարձ կլինի բնակավայրի համար այս կարեւոր փաստերին:

Պատմագիտության մեջ գյուղը հիշատակվում է մի քանի անվանումով, Ալիդարա (Ալդարա) անվան տակ մտել է Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի կազմում: Ալիդարա-դարա (ձոր), Ալիի ձոր՝ տխուր ստուգաբանություն է: Ըստ «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանի» 1979-ին Ալվանքն ունեցել է 784 բնակիչ, մեծամասամբ՝ ադրբեջանցիներ: 1988-ի իրադարձություններից հետո, երբ մեր հայրենակիցներին հարեւան հանրապետությունից բռնությամբ վտարեցին իրենց հայրենի օջախներից, նրանց մի մասը եկավ բնակություն հաստատելու Ալդարայում, որը վերանվանվեց Ալվանք: Ի դեպ, վերաբնակները ցանկանում էին գյուղը կոչել Բանանց (նրանք բանանցցիներ էին), բայց բնակավայրը կրեց ներկայիս անունը: Թեպետ դժվարությամբ, բայց բռնագաղթվածներն ընտելացան նոր միջավայրին եւ կենսապայմաններին, քանզի մի մասը քաղաքաբնակ էր: Սովոր չէին գյուղական կենցաղին, անգամ վառարան վառել չգիտեին:

Դա մոտ երեք տասնամյակ առաջ, այժմ գյուղն ապրում է բնականոն կյանքով, համայնքի խոշորացումից հետո այստեղ որոշակի փոփոխություններ են եղել, անցկացվել է փողոցային լուսավորություն, այժմ Ալվանքը երեկոյան ժամերին եւ գիշերը թաղված չէ խավարի մեջ, միկրոավտոբուսն օրական երեք անգամ գյուղ է մտնում, հաճելի էր տեսնել, որ կանգառ է կառուցվել՝ նստարաններով եւ ծածկով: Ալվանքում նաեւ աղբահանություն է իրականացվում:

Ի դեպ, բարեկարգ էր մայրուղուց մինչեւ գյուղապետարան ընկած ճանապարհահատվածը, իսկ ահա գյուղամիջի հրապարակի ծածկն այստեղ-այնտեղ բետոնով էր պատված, ինչը գյուղացիների նախաձեռնությունն է...

Գյուղը նաեւ որոշել է հավերժացնել մերօրյա պատերազմում ընկած համագյուղացիների հիշատակը, գյուղամիջում հուշաքար է տեղադրվել, որ գիր ունի. **«Հավերժ հիշատակ Արցախյան գոյամարտի հերոսներին՝ Արտաշեսին, Բորիսին, Արայիկին»:** Իմանում ենք, որ տարբեր վայրերում եւ տարբեր ժամանակներում են զոհվել, բայց նրանց միավորողը հայրենասիրությունն էր:

Ալվանքում մեզ հանդիպած առաջին մարդը 53-ամյա Նորիկ Ղուկասյանն էր: Ջրօգտագործողների ընկերությունում է աշխատում, հիմնարկի «Բելառուսն» է վարում: Մեղրեցի է, բայց 20 տարի է՝ գործի բերումով Ալդարայում է, սակայն իր ասելով, մի քառակուսի մետր հող չունի (զարմացանք, գյուղում ապրես եւ հողակտոր չունենաս): Մեխանիզատորի հետ, այն էլ ՋՕԸ-ում աշխատող, մեր զրույցը ոռոգման ջրի մատակարարման մասին էր, ավելի ստույգ՝ այն մասին, թե արդյոք արդարացնում է վերջին տարիներին Մեղրիի տարածաշրջանում ներդրված ոռոգման ջրի ինքնահոս եղանակով մատակարարումը: Տեղեկանում ենք, որ ինքնահոսով ոռոգման ջուր ստանում են ապրիլից մինչեւ հուլիսի կեսերը: Երբ Մեղրի գետն ամռան տապից բարակում է, ոռոգման ջուր են ստանում Արաքսից՝ մեխանիկական եղանակով: Դա էլ թերությունն ունի. Արաքսի տղմոտ ջրերից ջուր մատակարարող պոմպի շարժիչները շարքից դուրս են գալիս, ժամանակ եւ միջոցներ են օգտագործում դրանց անսարքությունը վերացնելուն:

Տարիներ առաջ շախով-շուխով, գյուղում, հանրապետության վարչապետ Արամ Սարգսյանի մասնակցությամբ ջրատարի բացման արարողություն է եղել, որից հեռավոր ու մարմրող հուշ է մնացել...

Դեռեւս 2000 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունվել էր որոշում Մեղրու տարածաշրջանի հիմնախնդիրների լուծման միջոցառումների ծրագրի մասին, որում ներառվել էր Ալդարա գյուղի խմելու եւ ոռոգման ջրամատակարարման բարելավմանը միտված քայլեր, բայց տարիներ են անցել, նույնիսկ տասնամյակներ, բայց նույն ջուրն է, նույն ջրաղացը...

Ի դեպ, ավելի խնդրահարույց է խմելու ջուրը: Մարդիկ գյուղի քյահրիզից են ջուր կրում՝ հանապազօրյա հոգսերը հոգալու համար, օրական մեկ, մեկուկես ժամ: Եվ դա 21-րդ դարում...

Ալվանքում, ինչպես ամենուր, այգեգործությամբ ու անասնապահությամբ են զբաղվում: «Խոզ, կով, ոչխար են պահում, դրանով յոլա գնում»,- ասում է մեր զրուցակիցը:

«Ընտանիքն իր այգիով կարողանում է խնդիր լուծել», – հետաքրքրվում ենք: Հարցին դրական է պատասխանում Նորիկը եւ հավելում, որ տնտեսություն կա մինչեւ 10-15 տոննա «կորոլյոկ» է հավաքում:

Մեր հաջորդ զրուցակցի՝ Դավիթ Թովմասյանի հետ զրույցը, նախեւառաջ, երիտասարդության զբաղվածության մասին էր, հարցերի հարցը բոլոր համայնքներում: *«Ջահելները հիմնականում պայմանագրային զինծառայողներ են, երկու-երեք հոգի Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատում են աշխատում, նույնքան՝ Ալվանքի դպրոցում եւ ճանապարհաշինությունում»:*

Գյուղից վերաբնակեցվելուց հետո արտագաղթ է եղել: *«Դատարկ տներ կան, բայց այնպես չէ, որ անտեր են մնացել, հարեւանը, բարեկամը տիրություն են անում»,* – փոխանցում է Դավիթը: Բայց նրա մյուս նախադասությունը լուրջ մտահոգության տեղիք կարող է տալ, մանավանդ երկրի տերերին. *«Անկախությունից մինչեւ էսօր գյուղի կեսը չկա... ով հնարավորություն ունի՝ գյուղից դուրս է գալիս»:* Ի դեպ, փակ տեսանք նաեւ գյուղի բուժկետի դուռը:

Ալվանքցիներին հուզող մյուս հարցը դեպի արոտավայրեր տանող ճանապարհն է. *«Սովետի կոլխոզը վերացավ, այդ ճանապարհին այլեւս ոչ ոք չհետեւեց, սելավներն*

Ներկայացվեցին պետական աջակցության ծրագրերը

Գորիսի Գուսան Աշոտի անվան մշակույթի տան դահլիճում հավաքվել էին Գորիսի ու Սիսիանի համայնքների բնակավայրերի վարչական պատասխանատուները, ֆերմեներ:

Ս րանք եկել էին մասնակցելու ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչների հետ հանդիպմանը: Վերջիններս «դատարկաձեռն» չէին եկել: Նրանք հանդիպման մասնակիցներին ներկայացրեցին գյուղատնտեսության ոլորտին վերաբերվող պետական աջակցության ծրագրերը: Իսկ դա ինքնանպատակ չէր:

Ժամանակը նոր պահանջներ է դնում նաեւ գյուղատնտեսության առջեւ:

Նման պարագայում, գյուղատնտեսական մթերքների արտադրության եւ իրացման գործում հաջողությունների հասնելու համար անհրաժեշտ է ոչ միայն ծանոթ լինել. այլեւ ձեռք բերել նոր տեխնոլոգիաներ: Իսկ նոր տեխնոլոգիաներով աշխատելու համար պետք է ունենալ նաեւ նոր մեքենասարքավորումներ, որը հնարավորություն կտա արտադրելու էկոլոգիապես մաքուր, բարձրորակ, մրցունակ գյուղատնտեսական արտադրանք: Այսինքն՝ այս երկուսի փոխկապակցվածության շնորհիվ ֆերմերները կարող են գյուղատնտեսական արտադրությունը դնել ժամանակակից ռելսերի վրա եւ ապահովել սեփական ագրոբիզնեսի շահութաբերությունը: Ահա ինչու նախարարության պատասխանատուները մանրամասն ներկայացրին ՀՀ կառավարության կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրերը, որոնք նպատակաուղղված են «խելացի» անասնաշենքերի կառուցմանն ու վերակառուցմանը, ինտենսիվ պտղատու այգիների եւ հատապտղանոցների հիմնմանը . լիզինգով ձեռք բերվող գյուղտեխնիկային, ինչպես նաեւ մատնանշվեցին գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ուղիներն ու սուբսիդավորման ենթակա գումարի չափերը եւ այլն:

Նրանք միաժամանակ նշեցին, որ պատրաստ են լսելու գյուղատնտեսության առաջընթացն ապահովող առաջարկությունները, որոնք կքննարկվեն նախարարությունում եւ կստանան համապատասխան ընթացք:

Ինչպես եւ սպասվում էր, բուռը քննարկում ծավալվեց սպանդանոցների կառուցման, կաթի մթերման գնի եւ այլ հարցերի շուրջ: Հանդիպման մասնակիցները նշեցին, որ «խելացի» անասնագոմ կառուցելը բոլորովին իմաստ չունի, շահութաբեր չէ, քանի դեռ կաթի մթերման գինը շատ ցածր է: Նման պարագայում ֆերմերն անպայման տուժելու է: Սպանդանոցների կառուցման, դրանց գործունեության վերաբերյալ հարցերը եւս բազմաթիվ էին: Ինչ պահանջներ են առաջադրվելու սպանդանոց կառուցողներին, ֆերմերն իր անասունը սպանդանոցում մորթի ենթարկելուց հետո ինչ պիտի անի միսը, ով է իրացնելու միսը, կենդանի քաշով են սպանդանոցներն ընդունելու անասունները, թե՝ ոչ: Եվ շատ ու շատ հարցեր, որոնք հուզում էին ներկաներին:

Հնչած հարցերին նախարարության պատասխանատուների կողմից հիմնականում տրվեցին փաստարկված պատասխաններ:

Ալվարդ Մեսրոպյան

Իշխան Ղարիբյանը՝ Կապանի թատրոնի գեղարվեստական ղեկավար

Փետրվարի 1-ին Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար է նշանակվել Իշխան Ղարիբյանը: Այս մասին տեղեկանում ենք թատրոնի ֆեյսբուքի էջում հրապարակված փաստաթղթից:

Կապանի Ա. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնի նորանշանակ գեղարվեստական ղեկավար Իշխան Ղարիբյանը թատրոնի զարգացման հետ կապված բազմաթիվ ծրագրեր ունի: «Արմենպրես»-ի թղթակցի հետ զրույցում Ղարիբյանն ասաց, որ նոր խաղացանկ կազմելու

ու անձրեւները քանդեցին, հիմա անանցանելի է դարձել», – ասում է Դավիթը: Իսկ արոտավայրերն անասնապահությունը զարգացնելու կարեւոր միջոցն են, եթե ոչ ամենակարեւորը...

Ավելի բարձրում գտնվող Մալեւ եւ Ատկեզ բնակավայրեր (ցավոք սրտի, արդեն դատարկված եւ լքյալ) հնարավոր չէ գնալ: *«Այդտեղ խնձորուտ կար, բայց արդեն ծառերը չորացել են»,* – հիշում են: Ընդ որում՝ եկեղեցիների հետքեր կան, մեկը՝ կանգուն, հայկական գերեզմաններ, տների ավերակներ:

Կանգնած ենք գյուղի հրապարակում, եւ լեռան ավելի բարձր գոգին տան հետքեր ենք նշմարում: *«Հարթ վայրերում տներ չեն կառուցել, այգիներ են մշակել, ապրել, համ էլ վերեւ են բարձրացել՝ թշնամիներից պաշտպանվելու համար, 1960-ական թվականներին են իջել հարթավայրեր»,* – բացատրում են:

«Գյուղը դպրոցով է կանգուն», – ճշմարտությունը մտմտալով շարժվում ենք կրթօջախի ուղղությամբ: Ալվանքի դպրոցը դեռեւս խորհրդային տարիներին բարեկարգ վիճակում էր, կահավորված: Այդ ամենի հետ կապված մի պատմություն կա. աշխարհահռչակ աստղագետ Վիկտոր Համբարձումյանն այցելել է Մեղրի եւ զրույցի ընթացքում ասել, որ «ադրբեջանական դպրոցներին պիտի լավ նայել»: Սկզբում ոչ ոք չհասկացավ այդ խոսքերի իմաստը: Այդժամ Վիկտոր Համբարձումյանը բացատրեց, որ այդպես պետք է, քանի որ ադրբեջանցիները լավ դպրոցում սովորելուց հետո գնում են Բաքու՝ ուսումը շարունակելու համար ու չեն վերադառնում, եւ դրանով իսկ գյուղում քչանում էր նրանց թվաքանակը: Ինչքանով էր գործում այդ մարտավարությունը՝ դժվար է ասել, սակայն հետաքրքիր էր մտածված...

Ինչեւէ, երբ մոտենում էինք դպրոցին, տեսանք դպրոցականների, ովքեր աշխուժորեն ձնագնդի էին խաղում, եւ այդ ամենի մեջ ապրեցնող կենդանություն կար: Դասաժամերն ավարտվել էին, եւ աշակերտների մի այլ խումբ ուսուցիչների հետ դպրոցի դարպասից դուրս էր գալիս: Երիտասարդ ուսուցչուհի Անուշ Պետրոսյանը, ով 2018-ին ավարտել է Երեւանի մանկավարժական համալսարանի մագիստրատուրան «Հասարակագիտություն» մասնագիտությամբ եւ երկրորդ տարին է, ինչ դասավանդում է կրթօջախում, մեզ որոշ մանրամասներ հաղորդեց: Դպրոցում 32 աշակերտ է սովորում, այս ուստարում երկու շրջանավարտ ունեն, ովքեր որոշել են բարձրագույն կրթություն ստանալ եւ վերադառնալ հայրենի գյուղ՝ հարազատ կրթօջախում դասավանդելու: Գյուղն ունի նաեւ նախակրթարան, որի հինգ սանը նոր ուստարում ոտք կդնի Ալվանքի դպրոցի շեմին (շատ հուսադրող փաստ): Այժմ առաջին դասարանում միայն մի աշակերտ կա...

Դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ Սամվել Օհանյանը պատմում է դպրոցի մանկավարժական կազմի մասին: Կրթօջախը հիմնական համալրված է ուսուցիչներով, բայց 8-9-ը դրսեկ են, ինքն ու Անուշն էլ Մեղրուց են գալիս:

...Մտածում ես՝ կլինի՞ այնպես, որ դպրոցի բոլոր մանկավարժները տեղացի լինեն, իսկ դպրոցականների թիվն անցնի հարյուրից...

Վահրամ Օրբելյան

Հ.Գ. Հակասական խորհրդածություններով թողեցինք Ալվանքը: Որոշ ժամանակ հետո ճանապարհն արդեն անցնում էր Արաքսի մոտով: Մայր գետն անվրդով այս անգամ իր պղտոր ջրերն էր հոսեցնում՝ բաժանված մի քանի մասի: Մեքենայի մեջ գտնվողներս ակամա մտաբերեցինք երբեւէ Արաքսի մասին գրված ստեղծագործություններ, դրանց մեջ, թերեւս, Ռափայել Պատկանյանի «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունը.

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ:
Հին-հին դարուց հիշատակ
Ալյաց մեջը պըտրում եմ:

◈ ◈ ◈

- «Արաքս, ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չհասած՝
Սգավոր ես ինձ նման...

■

«Չաարատ Կապանը» ձեռնամուխ է եղել Շմավոն Մովսիսյանի անվան պատմության թանգարանի նորոգմանը

Մեկ տարուց քիչ ավելի է, ինչ Կապանի լեռնահարստացման կոմբինատը հանդիսանում է բրիտանական «Չաարատ Գոլդ ինթերնեշնլ Լիմիթեդ» ընկերության միավոր: Եվ ի սկզբանե «Չաարատ Կապանը» ձեռնամուխ է եղել մարզկենտրոնի եւ ազդակիր համայնքների հիմնախնդիրների լուծմանը:

Ասանավորապես անցած տարվա նոյեմբերին ավարտին հասցվեց «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկայի «Կանանց կոնսուլտացիա» բաժանմունքի հիմնանորոգումը: Բուժանձնակազմի համար ստեղծվեցին բարենպաստ պայմաններ այցելուներին սպասարկելու համար: Փետրվարի 1-ից նույն հարմարավետ պայմաններում սկսեցին աշխատել պոլիկլինիկայի վիրաբուժության եւ ուրոլոգիայի բաժանմունքների բուժանձնակազմերը:

Շաբաթներ առաջ կոմբինատի ենթակառուցվածքների ծառայությունների նախագծման եւ շինարարության բաժնի շինարարական տեղամասի մարդիկ սկսել են Շմավոն Մովսիսյանի անվան պատմության թանգարանի 101 քառակուսի մետր մակերեսով երկու ցուցասրահի հիմնանորոգումը: Վերջին անգամ թանգարանում նորոգումներ իրականացվել էին 2014 թվականին, եւ ավելորդ իրերը տեղավորել էին այդ երկու հարկաբաժնում, որոնք փաստորեն ծառայում էին որպես խորդանոց: Որոշ ժամանակ անց դրանք կծառայեն իրենց բուն նպատակին: Այդ առումով թանգարանի տնօրեն Արմեն Գեւորգյանը, ով թանգարանը ղեկավարում է 2013 թվականից, ասում է. *«Մեր քաղաքի նորագույն պատմությունը սերտորեն շաղկապված է կոմբինատի գործունեության հետ, հարմար գտանք, որ այդ երկու ցուցասրահը նվիրենք կոմբինատի անցած ճանապարհին, նաեւ ձեր թերթի միջոցով ուզում եմ դիմել կապանցիներին, եթե իրենց մոտ ունեն կոմբինատի վերաբերյալ արխիվային նյութեր, լուսանկարներ, ձեռնարկության հնագույն աշխատակիցներին առնչվող անձնական իրեր, հանձնեն թանգարանին, մենք դա սիրով կցուցադրենք: Ի դեպ, նորոգվող ցուցասրահներից մեկի պատին կոմբինատի համայնապատկերով որմնանկարն է, որ ստեղծել է գեղանկարիչ Լեռնիկ Առաքելյանը»:*

Ինչպես տեղեկացանք, շինարարական աշխատանքները կավարտվեն ապրիլին: Նորոգվելը կնորոգվի, բայց ի՞նչ երաշխիք, որ այդպիսին կմնա: Թանգարանը տեղավորված է Գարեգին Նժդեհի փողոցի թիվ 24 շենքի առաջին հարկում: Մեկ անգամ չէ, որ վերին հարկերի անբարեխիղճ բնակիչների մեղքով խցանվել են շենքի կոյուղու խողովակները, եւ կեղտաջրերն իրենց սեւ գործն են արել՝ միաժամանակ վնասելով ցուցանմուշները: Ոչ մի նորոգում սպասված արդյունքը չի տա, եթե սրբորեն չպահպանվի արվածը: Այս դեպքում եւս սա լուրջ խորհրդածության նյութ է բնակիչների համար:

Տասնամյակներ ի վեր նման վիճակում էր Կապանի երկրագիտական թանգարանը, որ տեղավորված էր Շահումյան փողոցի թիվ 22 շենքի առաջին հարկում: Բարեբախտաբար, մի քանի տարի առաջ մշակութային այդ օջախը տեղավորվեց հիմնանորոգված երկհարկանի շենքում: Իսկ Կապանի պատմության թանգարանը հիմնավորապես հաստատվել է վերոհիշյալ շենքի առաջին հարկում, ինչը չի բացառում ջրային նոր «գրոհի» ենթարկվելը:

Վահրամ Օրբելյան

Կմտադրություններ կան, նախատեսում են վերանորոգել թատրոնը:

«Թատրոնը սպառազինման կարիք ունի: Անհրաժեշտ է այն համալրել լուսային, ձայնային տեխնիկայով: Սկզբնական շրջանում կփորձենք ամեն բան մեր ուժերով անել՝բեմադրել լավ ներկայացումներ, որոնց շահույթը հնարավոր կլինի օգտագործել ծրագրերն իրագործելու համար: Եթե ինչ-որ բաներ չհասցնենք անել, կդիմենք պետական ատյանների աջակցությանը», - նշեց նա:

Ղարիբյանի խոսքով՝ նախկինում թատրոնում ցերեկային խաղացանկ չի եղել: *«Անցյալ երեք ամսվա ընթացքում, երբ դեռ թատրոնի գեղարվեստական ղեկավար չէի, մանկապարտեզի երեխաների, դպրոցի աշակերտների համար ցերեկային ներկայացումներ բեմադրեցինք: Ներկայացրինք «Աշնան արեւ»-ը՝ նվիրված Հրանտ Մաթեւոսյանի հոբելյանին, եւ այլ ներկայացումներ: Փետրվարի 22-23-ին կրկին առաջնախաղեր ունենք, 29-ին թատերասերների դատին մոնոներկայացում կհանձնենք: Խաղացանկն ամբողջությամբ թարմացնում ենք»,* - շեշտեց գեղարվեստական ղեկավարը:

Անդրադառնալով թատրոնի դերասաններին՝ Ղարիբյանն ասաց, որ աշխատում է երիտասարդացնել թատրոնը, բայց Կապանում չկա ԵԹԿՊ-ի մասնաճյուղ, ուստի երբեմն դերասանների են հրավիրում Երեւանից: Նա շեշտեց, որ Կապանի թատրոնի արտիստները լավն են, որոնցից շատ բան է սովորում. նրանք էլ՝ իրենից: Վստահ է՝ արդյունքը դրական կլինի:

Ղարիբյանը հավելեց, որ Կապանում դերասանական ստուդիա հիմնելու մեծ ցանկություն ունի: *«Թատրոնը պարբերաբար պետք է համալրվի երիտասարդներով, հակառակ դեպքում այն երկար ապրել չի կարող»,* – եզրափակեց նա:

Իշխան Ղարիբյանը Կապանի Ա. Շիրվանզադեի դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար է նշանակվել փետրվարի 1-ից:

Անժելա Համբարձումյան



«Մեղրի» մաքսակետի արդիականացման աշխատանքները կմեկնարկեն 2020-ի վերջին

«Մեղրի» սահմանային անցակետի արդիականացման աշխատանքները կմեկնարկեն այս տարվա վերջին եւ ավարտին կհասցվեն 2024-ին: Այս մասին հրավիրված ասուլիսում հայտնեց Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Շուշանիկ Ներսիսյանը:

2016-ից մինչեւ հիմա հարավային դարպասով սահմանահատումների թիվը երկու անգամ աճել է: Երրորդ երկրներից ցամաքային ճանապարհով ՀՀ ներմուծում իրականացնող բեռնատարների միջինը 18 տոկոս սահմանահատումն իրականացվում է «Մեղրի» մաքսակետով: Սեզոնայնությամբ պայմանավորված տարբեր ամիսներին այս թիվն աճում է ընդհուպ մինչեւ 25 տոկոս:

armenpress.am

Սուրբ Սարգսի տոնը՝ Վահանավանքի վանական համալիրում

Վահանավանքի վանական համալիրում փետրվարի 8-ին տեղի ունեցավ պատարագ՝ Սուրբ Սարգիս Զորավարի տոնին նվիրված, որը մատուցեց հոգեւոր հովիվ Տեր Ավետիք քահանա Մարտիրոսյանը:

Պատարագից հետո ներկանները վայելեցին Կապանի արվեստի պետական քոլեջի եւ Եվրոպական քոլեջի շնորհաշատ ուսանողների եւ դասախոսների ջանքերով կազմակերպած փոքրիկ միջոցառումը, որն էլ ավարտվեց թեյախմության տաք արարողությամբ:

Նշենք, որ Սուրբ Սարգսի տոնը Հայաստանում ընդունված է նշել ոչ միայն եկեղեցական ծեսով, աղոթքով, այլեւ ժողովրդական սովորույթներով, որը մեզանում նվիրական ավանդույթ է: Սուրբ Սարգիսը երիտասարդների արագահաս բարեխոսն է: Նրա միջնորդությամբ հրաշքներ են տեղի ունենում: Այդ օրը երիտասարդներն աղոթում են Սրբին, որ իրենց աղոթքները հասցնի առ Աստված: Ս.Սարգիսը սիրո երազանքն իրականացնող Սուրբ է: Սուրբ Սարգսի տոնի անբաժանելի մասն է աղի բլիթի արարողությունը: Տոնի նախորդ օրը երիտասարդներն ուտում են աղի բլիթ՝ հույսով, որ երազին իրենց կյանքի ուղեկիցը ջուր կտա:

Վահանավանքյան պատարագին մասնակցում էր Կապան համայնքի ղեկավար Գեւորգ Փարսյանը: ■

Լավագույն ավանդույթները շարունակվում են. «Կապանյան ձմեռ-2020»

Փետրվարի 16-ին Կապան համայնքի Կարմրաքար գյուղի՝ նախկին հանգստյան գոտու հարակից տարածքում տեղի ունեցավ բոլորի կողմից երկար սպասված «Կապանյան ձմեռ-2020»-ը, որի նախաձեռնողը Կապան համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհուրդն էր, իսկ աջակցությունը ցուցաբերել էր Կապանի համայնքապետարանը: Ձյունառատ ձմռան արեւոտ այս օրը միջոցառմանը մասնակցելու էին եկել Կապան համայնքի ղեկավար Գեւորգ Փարսյանը, բուհերի, քոլեջների ուսանողները, զինվորները, ակտիվ երիտասարդները եւ երեխաները: Միջոցառման ընթացքում կազմակերպվեցին բազմաթիվ մարզական խաղեր՝ հրաձգություն, պարանի ձգում, դրոշի գրավում, երիտասարդները պատրաստեցին ձնեմարդ, խաղացին ձնագնդիկներով, շուրջպար բռնեցին, երգեցին ու պարեցին, իսկ մրցութային խաղերի հաղթողները պարգեւատրվեցին խրախուսական նվերներով: Մասնակիցներն ապահովված էին նաեւ տաք ըմպելիքներով եւ քաղցրավենիքներով, իսկ ողջ միջոցառման ուրախ եւ ժամանցային մասն ապահովում էր Կապանի մշակույթի կենտրոնի ստեղծագործական կազմը:

Կապանի համայնքապետարան

Կենսաթոշակառուներին եւ հաշմանդամություն ունեցող անձանց պետական թատրոններ եւ թանգարաններ այցելելու անվճար տոմսեր կտրամադրվեն

«Ուրախ ենք տեղեկացնել, որ հաշմանդամություն ունեցող անձանց եւ կենսաթոշակառուների մշակութային առօրյան, կյանքն ակտիվացնելու համար այսօր Կրթության, գիտության, սպորտի եւ մշակույթի նախարար, իմ գործընկեր Արայիկ Հարությունյանի հետ ստորագրում ենք մի կարեւոր հուշագիր, որը մեր քաղաքացիներին տարվա կտրվածքով շուրջ 48 թատերական ներկայացման եւ, գրեթե, ամեն օր՝ թանգարաններ անվճար հաճախելու հնարավորություն կտա», - այս մասին ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունում տեղի ունեցած միջոցառման մեկնարկին հայտարարել է նախարար Զարուհի Բաթոյանը:

Ըստ կարգի համաձայն՝ կենսաթոշակառուներին եւ հաշմանդամություն ունեցող անձանց անվճար տոմսեր կտրամադրվեն ԿԳՍՄ նախարարության ենթակայությամբ գործող թատերական կազմակերպությունների կողմից պետական աջակցությամբ իրականացվող մշակութային միջոցառումներին մասնակցելու, ինչպես նաեւ թանգարաններ այցելելու համար:

Նախարար Բաթոյանը նշել է, որ սա կարեւոր նախաձեռնություն է ոչ միայն ֆինանսական հասանելիության տեսանկյունից, այլեւ՝ կարող է խթան հանդիսանալ՝ մշակութային օջախների ֆիզիկական եւ բովանդակային մատչելիության ապահովման համար:

ՀՀ կրթության, գիտության, սպորտի եւ մշակույթի նախարար Արայիկ Հարությունյանը եւս կարեւորել է հուշագրի ստորագրումը եւ նշել, որ նախարարության ծրագրերն ուղղված են մշակութային կյանքում հնարավորինս մեծ թվով անձանց ներգրավմանը.

«Մենք երկար ենք քննարկել բոլոր մեխանիզմները, որպեսզի գործընթացը հնարավորինս հեշտ լինի մեր հայրենակիցների համար: Ուրախ եմ, որ այս տարի հաշմանդամություն ունեցող անձանց եւ կենսաթոշակառուների համար ավելացել է նաեւ թանգարաններ այցելելու հնարավորությունը», - ասել է նախարար Հարությունյանը:

Ստորագրված կարգի համաձայն՝ յուրաքանչյուր կենսաթոշակառու կարող է անվճար այցելել յուրաքանչյուր թատերական կազմակերպություն՝ տարեկան 3 անգամ, եւ թանգարաններ՝ ամիսը 2 անգամ: Անվճար տոմսեր կենսաթոշակառուներին տրամադրվում են մինչեւ միջոցառման սկսվելը՝ առնվազն 24 ժամ առաջ, իսկ թանգարանների պարագայում՝ կենսաթոշակառուի այցելության պահին:

Կարգի համաձայն՝ յուրաքանչյուր թատերական կազմակերպություն յուրաքանչյուր միջոցառման համար ինքն է որոշում անվճար տրամադրվող տոմսերի քանակը, որը կարող է տատանվել դահլիճի տեղերի 2,5-5 %-ի սահմաններում:

Տոմսերը կտրամադրվեն անձամբ կենսաթոշակառուին՝ կենսաթոշակառու լինելու հանգամանքը հավաստող փաստաթղթի եւ անձնագրի առկայության դեպքում: Տոմսը տրամադրող աշխատակիցը պետք է համապատասխան գրանցամատյանում գրառում կկատարի, որտեղ կնշվի օրը, ամիսը, տարին, միջոցառման անվանումը, կենսաթոշակառուի անուն, ազգանունը, ծննդյան թիվը, հաշմանդամություն ունենալու հանգամանքը (առկայության դեպքում), հեռախոսահամարը:

Անվճար տոմս ստանալուց հետո, կենսաթոշակառուն պետք է ստորագրի գրանցամատյանի համապատասխան սյունակում: Անվճար տոմսի վրա պարտադիր պետք է նշվի կենսաթոշակառուի կամ հաշմանդամություն ունեցող անձի անունը եւ ազգանունը: Տոմսեր կտրամադրվեն նաեւ տարեցներին ծառայություններ մատուցող կազմակերպության կամ տարեցների միավորումների, հասարակական կազմակերպությունների ղեկավարներին՝ համաձայն նրանց կողմից ներկայացված ցուցակի, որտեղ պետք է նշված լինեն կազմակերպության անվանումը, կենսաթոշակառուների անուն, ազգանունները, ծննդյան թվերը: Խմբում ընդգրկված կենսաթոշակառուների թիվը չի կարող գերազանցել 20-ը: Խմբի հետ կարող է լինել մեկ ուղեկցող (սոցիալական աշխատող, կամ տվյալ հասարակական կազմակերպության ղեկավարը), որը եւս ստանում է անվճար տոմս: Այս դեպքում տոմս ձեռք բերելու համար պետք է դիմել միջոցառման սկսվելուց առնվազն 5 օր առաջ:

Անվճար տրամադրվող տոմսերի վրա պետք է դրվի դրոշմակնիք «անվճար» նշումով (առկայության դեպքում) կամ տրամադրվի «հրավիրատոմս» տեսակի տոմսեր:

Նշենք նաեւ, որ տրամադրված անվճար տոմսը այլ անձի փոխանցել չի թույլատրվում:

mlsa.am

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ // Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի Նորաշենիկի միջնակարգ դպրոցի «Ռուսաց լեզու» (շաբաթական 6 ժամ) եւ «Ֆիզկուլտուրա» (շաբաթական 10.5 ժամ) առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է 2 փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է / ձեւ 1/:
2. Փաստաթուղթ /դիպլոմ/՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն /ձեւ4/
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/
6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ մարտի 4 ներառյալ, ամեն օր ՝ժամը 9:00-13:00, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա ժամը 13:00-ին, հասցե՝ գյուղ Նորաշենիկ :

Տեղեկությունների համար զանգահարել (098) 29 99 52 հեռախոսահամարով:

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 18.02.2020թ.: